## Արձանագրություն 2

## ՀՀ ՖՆ կարիքների համար «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման և գնահատման նիստի

ք. Երևան «20» փետրվար 2020թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝

***Հանձնաժողովի նախագահ***

**Վ. Հարությունյան** – ՖՆ ծրագրերի իրականացման վարչության պետ,

***Անդամներ***

**Վ. Պողոսյան** - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի պետ - գլխավոր հաշվապահ,

**Հ. Ղազարյան** - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

**Ա. Գրիգորյան** – ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի գլխավոր մասնագետ,

**Կ. Սիրունյան** – ՖՆ ծրագրերի իրականացման վարչության ֆինանսատնտեսական բաժնի տնտեսվար,

***Գնումները համակարգող***

**Ա. Աղաբաբյան** - ՖՆ ծրագրերի իրականացման վարչության գնումների բաժնի գլխավոր մասնագետ

### 1. Տեղեկություններ հայտերի բացման մասին

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերի հրապարակվելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:30-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

### 2. Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և գտնվելու վայրերի հասցեների մասին

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով կազմակերպված «ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը՝

| Մասնակցի անվանումը | Տվյալները |
|---|---|
| «Յուքոմ» ՓԲԸ | ՀՎՀՀ՝ 00024873, հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 19, բն. 4, էլ հասցե՝ corporate@ucom.am, հեռ.՝ +37495555054, +37411400400 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

**3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, սահմանված պայմաններին համապատասխան կազմած լինելու մասին**

Հանձնաժողովն ընդունեց ի գիտություն, որ «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված լիազորագիրը հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը**

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկված գները ներկայացվում են ստորև՝

| Չ/Հ | ԳՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ | Պայմանագրի կատարման համար առաջարկվող գները (ՀՀ դրամ) | | | |
|---|---|---|---|---|---|
| | | «Յուքոմ» ՓԲԸ | | | |
| | | Ինքնարժեք | Շահույթ | ԱԱՀ | Ընդհանուր գին |
| 1 | Մալուխային հեռուստատեսությո ւն<br><br>(նախահաշվային գին՝ 400 000 ՀՀ դրամ) | 236 000 | 39 000 | 55 000 | 330 000 |

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

**5. Հանձնաժողովի կայացրած որոշումները**

Հանձնաժողովը որոշեց

1. Կասեցնել գնահատող հանձնաժողովի նիստը 1 աշխատանքային օրով և ծանուցել «Յուքոմ» ՓԲԸ-ին՝ առաջարկելով հրավերով սահմանված ժամկետում շտկել առկա անհամապատասխանությունները՝ ներկայացնելով էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լիազորագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0:

**6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը**

«ՀՀ ՖՆ-ԳՀԾՁԲ-20/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել սույն թվականի փետրվարի 24-ին ժամը 11:00-ին ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Մ. Ադամյան 1:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

| | | |
|---|---|---|
| Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ | ______________ | Վ. Հարությունյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | ______________ | Վ. Պողոսյան |
| | ______________ | Հ. Ղազարյան |
| | ______________ | Ա. Գրիգորյան |
| | ______________ | Կ. Սիրունյան |
| Գնումները համակարգող՝ | ______________ | Ա. Աղաբաբյան |